ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ

N 01/01-857

«25» 06 2024

ՈՐՈՇՈՒՄ

ԱՁ Ռուբեն Բաղդիշյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ «Պատվիրատու») և ԱՁ Ռուբեն Բաղդիշյանի (այսուհետ «Կատարող») միջև 2024 թվականի մայիսի 31-ին մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում կնքվել է N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-24/ԷՓ-1 պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր), ըստ որի Կատարողը պարտավորվում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը Պատվիրատուին մատուցել խմբային էքսկուրսիայի կազմակերպման ծառայություններ: Սակայն 2024 թվականի հունիսի 11-ին Կատարողը Պատվիրատուին ծանուցել է, որ առաջացած խնդիրների պատճառով չի կարող մատուցել պայմանագրով նախատեսված ծառայությունները: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատվիրատուն 2024 թվականի հունիսի 17-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը ամբողջությամբ: Պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով, կիրառելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, 2024 թվականի հունիսի 17-ին ԱՁ Ռուբեն Բաղդիշյանին ուղարկվել է համապատասխան ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

ԱՁ Ռուբեն Բաղդիշյանին (հասցե՝ Ք. Երևան Զաքյան 5, ՀՎՀՀ 23198053) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար՝ **Ա. Գրիգորյան**

Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0025, Նալբանդյան 128
Հեռ.՝ +374 10 593423, Ֆաքս՝ +374 10 528864
Էլ.փոստ՝ info@asue.am, www.asue.am

Republic of Armenia,
Yerevan 0025, Nalbandyan str. 128
Phone: +374 10 593423, Fax: +374 10 528864
E-mail: info@asue.am, www.asue.am

Республика Армении,
Ереван 0025, Налбандяна 128
Тел.: +374 10 593423, Факс: +374 10 528864
Эл.почта: info@asue.am, www.asue.am